ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՄ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

XIX դարի սկիզբը եվրոպական երկրներում նշանավորվեց ազգային-ազատագրական շարժումներով և պայքարով, որոնք ուղղված էին նապոլեոնյան նվաճումների, ավստրիական ու օսմանյան կայսրությունների տիրապետության դեմ: Դրանք արևելահայ լիբերալիզմի ականավոր գործիչ և գաղափարախոս Գրիգոր Արծրունու (1845 –1892) պատկերավոր արտահայտությամբ՝ ընկած էին դարի քաղաքական բարոյականության հիմքում և բնութագրվում էին՝ «Ես ապստամբում եմ, ուրեմն ես կամ»[1]:

Եվրոպական ճնշվող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին հայ հասարակական մտքի պատմության մեջ հիմնականում անդրադարձել են արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամները, ինչպես նաև նրանց հրատարակած «Տարեգրություն», «Եղանակ բյուզանդյան» և «Դիտակ բյուզանդյան» առաջին պարբերականները: Մխիթարյաններն իրենց աշխատություններում ձգտել են անաչառ լինել և անկողմնակալ պատմել Նապոլեոն Բոնապարտի իրականացրած նվաճումների ու եվրոպական ժողովուրդների ազատագրական պայքարի մասին: «Տարեգրությունը» (1800–1802 թթ.) և «Եղանակ բյուզանդյանը» (1803–1820 թթ.) իրենց հրապարակումներում հպանցիկ ներկայացնում են եվրոպական ժողովուրդների ազգային շարժումները և անդրադառնում հայրենասիրության ու ազատասիրության գաղափարին: «Դիտակ բյուզանդյանի» (1812–1816 թթ.) համարները հիմնականում եվրոպական մամուլի հրապարակումների հիման վրա պատմում են Եվրոպայում կատարված գրեթե բոլոր գլխավոր իրադարձությունների մասին:

Մխիթարյան միաբանության անդամները, անդրադառնալով նապոլեոնյան Ֆրանսիայի տիրապետության դեմ եվրոպական ժողովուրդների պայքարին, կարևորում են հատկապես՝ իսպանացիների 1808–1814 թթ. ազգային-ազատագրական պայքարի լուսաբանումը:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան ու բանասեր Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը (1826–1906), անդրադառնալով իսպանական ժողովրդի ազատագրական պայքարի սկզբնավորմանը, նախ պատմում է 1807 թ. վերջերին Պորտուգալիան նվաճելու մասին: Նա իրավացիորեն գրում է, որ Պորտուգալիայի թագավորը չցանկացավ «հնազանդիլ»

---

[1] *Տե՛ս «Մշակ», 1878, թիվ 165:*

Նապոլեոն Բոնապարտի «ցամաքային պաշարմանը»[2], ուստի «Ժյունոն[3] զորավարը գաղղիացի բանակով Փորթոկալի տերությունը մտավ»: Նա մեկ շաբաթում գրավեց Պորտուգալիան և «Պրականցայի[4] թագավորական ցեղը անկեց քշեց»: Պորտուգալիան նվաճելիս Ֆրանսիայի «ամենեն ավելի ապահով դաշնակիցը Սպանիան էր»: Նրա նվաճումից հետո, երբ Նապոլեոնը լսեց, որ Իսպանիայի թագավոր Կարլ IV-ի (1788–1808) որդի Ֆերդինանդը «խռովություն հանել կուզե», անմիջապես զորք ուղարկեց այնտեղ՝ «իբր թե ծեր թագավորին պաշտպանություն ընելու համար»: Բայց «երբոր կռիվը երկնցավ», Ֆրանսիայի Բայոնն քաղաքը հրավիրեց Կարլ IV թագավորին, նրա որդուն և «Մանուել Կոտոյի[5] իշխանին ու կես անուշությամբ՝ կես ալ սպառնալեոք հրաժարեցուց զանոնք Սպանիո թագավորութենեն»: Թագավորական ընտանիքը և Մ. Գոդոյը Իտալիա «քաշվեցան»: Դրանից հետո Նապոլեոնը Ֆերդինանդին աքսորեց, իսկ Իսպանիայի գահը հանձնեց իր եղբայր Ժոզեֆին, ով մինչ այդ Նեապոլի թագավորն էր[6]:

Գրեթե նույն դիրքորոշմամբ այս իրադարձությունները լուսաբանում է Վիեննայի Մխիթարյաններից Գրիգոր վարդապետ Գովրիկյանը (1840–1931), ըստ որի՝ Բոնապարտը 1807 թ. Պորտուգալիան «բռնելեն ու Ֆերդինանդոս Է. Սպանիացին 1808-ին, Պայոնի մեջ թագեն հրաժարելու ստիպելեն ետև յուր Յովսեփ[7] եղբայրը Սպանիայի ու քեռայրը՝ Հովակիմ Մյուրան[8], Նեապոլսո թագավոր անվանեց»[9]:

Կատարվածի մասին ավելի հանգամանորեն ու հավաստի գրում է Վիեննայի Մխիթարյաններից բանասեր և պատմաբան Ղևոնդ վարդապետ Հովնանյանը (1817–1897): Նա Մխիթարյանների «Եվրոպա» քաղաքական պարբերականի գործուն մասնակիցներից էր, քաղաքական առումով բավականաչափ տեղեկացված անձնավորություն: Ղ. Հովնանյանը իրավացիորեն ընդգծում է, որ Նապոլեոնին «իր տիեզերա-

---

[2] *Նկատի ունի 1806 թ. Նապոլեոնի հայտարարած մայրցամաքային շրջափակումը, որով Ֆրանսիայի դաշնակից և նրան ենթակա պետություններին արգելվում էր առևտուր անել Մեծ Բրիտանիայի հետ (տե՛ս* Е. В. Тарле. Сочинения, т. III. М., 1959, с. 195*):*

[3] *Խոսքը Նապոլեոնի համհարզ Ժան Անդոշ Ժյունոյի (1771–1813) մասին է, ով սեպտեմբերի 18-ին մտավ Իսպանիա, իսկ նոյեմբերի 30-ին՝ Լիսաբոն: Պորտուգալիան նվաճելու համար նա 1808 թ. հունվարի 15-ին ստացավ դ'Աբրանտեսի դքսի տիտղոս: Նապոլեոնը նրան անվանում էր «փոթորիկ»:*

[4] *Խոսքը Պորտուգալիայում կառավարող Բրագանսի թագավորական տան մասին է:*

[5] *Նկատի ունի Մանուել Գոդոյին (1767–1851), ով, դառնալով Մարիա-Լուիզա թագուհու ֆավորիտը, գլխապտույտ կարիերա ունեցավ՝ երեք տարվա ընթացքում զինվորից դառնալով կառավարության ղեկավար (1792): Նա վայելում էր նաև թագավորի հովանավորությունը և ազդեցիկ պետական գործիչ էր: 1795 թ. Բազելի հաշտության պայմանագրի կնքման համար Մ. Գոդոյը ստացավ «խաղաղության իշխանի» տիտղոս: 1804 թ. նրան շնորհվեց գեներալիսիմուսի զինվորական կոչում (տե՛ս* В. А. Егоршин. Генералиссимусы. М., 1994, с. 162*):*

[6] *Ա. Գալֆայան. Համառոտագրություն ժամանակակից պատմության, Վենետիկ, 1851, էջ 142–143:*

[7] *Ժոզեֆ Բոնապարտ (1768–1844) – Նապոլեոնի ավագ եղբայրը, Նեապոլի (1806–1808) և Իսպանիայի (1808–1813) թագավոր:*

[8] *Ժոաշիմ Մյուրատ (1767–1815) – Նապոլեոնյան բոլոր պատերազմների մասնակից: Նապոլեոնի զինակիցը և նրա քրոջ ամուսինը: Ֆրանսիայի մարշալ (1804), Նեապոլի կամ երկու Սիցիլիաների թագավոր (1808–1815): Մխիթարյանները ֆրանսիացի մարշալի անունը թարգմանաբար գրում էին Հովակիմ, իսկ ազգանունը ֆրանսերենով՝ Մյուրա:*

[9] *Գ. Գովրիկյան. Ընդհանուր պատմություն համառոտ, Վիեննա, 1879, էջ 263:*

կան իշխանությունը կատարյալ հաստատելու համար»[10] *անհրաժեշտ էր տիրել նաև Պիրենեյան թերակղզուն և Իտալիայի մի շարք գավառներին: Պորտուգալիան գրավելու պատճառը նա համարում է այն, որ Բրագանսների արքայատունը համարվում էր Ֆրանսիայի գլխավոր հակառակորդ Անգլիայի դաշնակիցը և չէր միացել մայրցամաքային շրջափակմանը:*

Պիրենեյան թերակղզուն տիրելու նպատակով Նապոլեոնը նախ Իսպանիային դարձրեց իր դաշնակիցը, այնուհետև Պորտուգալիայից պահանջեց նավատորմով օգնել շարունակելու պատերազմը Անգլիայի դեմ: Երբ Պորտուգալիայի «Հովհաննես խնամապետ իշխանը այս բանիս չհավնեցավ», Բոնապարտը 1807 թ. օգոստոսին նրան հայտնեց, որ եթե Պորտուգալիան ցանկանում է պահպանել իր թագավորական գահը, ապա «Անգղիայի հետ բոլոր հաղորդակցությունը կտրելու և ցամաքային դրության մեջ մտնելու է»: Ղ. Հովնանյանն իրավացի է: Նույն պայմանը Նապոլեոնը հոկտեմբերի 15-ին Ֆոնտենբլոյում դրեց նաև Պորտուգալիայի դեսպանի առաջ՝ սպառնալով երկու ամիս անց վերջ տալ պորտուգալական արքայական տանը: Վերջինս ձևական պատերազմ հայտարարեց Անգլիային[11]*: Ըստ Ղ. Հովնանյանի՝ պորտուգալական արքունիքի պատասխանը Ֆրանսիայի կայսրին չբավարարեց, ուստի նա Իսպանիայի «Կոտուա պաշտոնեին հետ Բորդուկալի երկիրները բաժնելու վրա գաղտնի դաշնավորություն մ'ըրավ, որուն մեջ Սպանիային ալ ավարեն մաս կը հանվեր»*[12]*:*

Ղ. Հովնանյանն այնուհետև իրավացիորեն գրում է, որ հոկտեմբերի 27-ին Ֆոնտենբլոյում կնքված գաղտնի դաշինքի համաձայն Պորտուգալիան բաժանվելու էր երեք մասի: Հյուսիսային մասը պիտի կոչվեր Լուսիտանիա և անցնելու էր Էտրուրիայի անչափահաս Կառլ Լուի թագավորին, ով դրա դիմաց իր ապագա տիրույթը թողնելու էր Ֆրանսիային: Նրա մայրը՝ Էտրուրիայի թագուհին, դեկտեմբերի 10-ին հրաժարվեց իր գահից, իսկ ֆրանսիական զորքերը մտան նրա տիրույթը: Պորտուգալիայի երկրորդ մասը՝ Ալկարուիան, անցնելու էր Մանուել Գոդոյին: Ըստ դաշինքի՝ Պորտուգալիայի այս երկու մասերում հաստատվելու էր իսպանական թագավորության իշխանությունը: Պորտուգալիայի մնացած մասը մնալու էր Ֆրանսիայի տիրապետության տակ՝ «մինչև որ խաղաղությունը նորեն հաստատվեր»:

Դաշինքի կնքումից հետո ֆրանսիական 28 հազարանոց բանակը Ժյունոյի հրամանատարությամբ մտավ Իսպանիա, որտեղից վերցրեց ևս 11 հազար զորք և արշավեց Պորտուգալիայի վրա: Նոյեմբերի 30-ին նա մտավ Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոն, իսկ 1808 թ. փետրվարի 1-ին Նապոլեոն Բոնապարտի անունից հայտարարեց պորտուգալական թագավորության վերացման մասին: Մինչ ֆրանսիացիների Մադրիդ մտնելը Պորտուգալիայի թագավոր Ժուան VI 1807 թ. նոյեմբերի 27-ին, հետևելով անգլիացիների խորհրդին, «իր բոլոր գանձերովն» ճանապարհվեց

---

[10] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. Պատմություն քաղաքակրթության եվրոպական տերությանց ընդհանրապես, հ. Գ, Երրորդ շրջան, Վիեննա, 1857, էջ 253:*

[11] Е. В. Т а р л е. Сочинения, т. VII. М., 1959, с. 199; А. К а с т е л о. Наполеон. Пер. с фр. М., 2004, с. 169; *Ա. Մ ա ն ֆ ր ե դ. Նապոլեոն, Երևան, 1975, էջ 585:*

[12] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 253:*

Բրազիլիա, որն իր տիրույթն էր: Միանգամայն հավաստի ներկայացնելով Նապոլեոնի կողմից Պորտուգալիայի նվաճումը՝ Ղ. Հովնանյանը գրում է, որ այս պատերազմում Իսպանիան հանդես եկավ որպես Բոնապարտի «բարեկամ ու դաշնակից»: Շուտով պարզ դարձավ, որ այս կարգավիճակում Իսպանիան «ապահով չէ»: Դրա պատճառը Ղ. Հովնանյանը համարում է իսպանացիներին, ովքեր «իրենց բռնած ընթացքով կայսեր տհաճության առիթ տված էին: Բոլոր ազգը՝ Գաղղիայի հետ դրված դաշնակցության վրա խիստ դժգոհ էր, որովհետև նույնեն՝ միայն վնաս կը կրեր»[13]:

Երբ Նապոլեոնը պատերազմում էր Պրուսիայի դեմ, Մանուել Գոդոյը ցանկանալով «ժողովրդյան իրեն դեմ ունեցած ատելութենեն ազատիլ», զինվորական պատրաստություններ տեսավ և 1806 թ. հոկտեմբերի 3-ին հորդորեց իսպանացիներին իրենց ունեցվածքն ու արյունը «հայրենյաց ու կրոնի համար զոհելու»: Բայց երբ ֆրանս-պրուսական պատերազմն ավարտվեց Պրուսիայի պարտությամբ և Տիլզիտի հաշտության կնքումով, «խաղաղության իշխան» Մ. Գոդոյը շտապեց Նապոլեոնի «սիրտն առնելու»: Նա ձևացրեց, թե զինվորական պատրաստությունների և իր հայտարարության պատճառը Պորտուգալիայից ու Մարոկկոյից սպառնացող վտանգն էր: Նապոլեոնը ձևացրեց, թե հավատում է Մանուել Գոդոյի «ջատագովությանը», բայց Իսպանիայի նկատմամբ «իր որոշումը չփոխեց»: Ֆոնտենբլոյում Իսպանիայի հետ դաշինք կնքելով՝ Նապոլեոնը արտաքուստ ցույց էր տալիս, թե Իսպանիայի հետ պատրաստ է Պորտուգալիան բաժանել իրենց միջև, բայց իրականում գրավեց պորտուգալական ռազմավարական ամրոցները, իսկ դաշնակից իսպանացիներին ուղարկեց էտրուրիան իր համար նվաճելու:

Մինչ իսպանական զինվորները ֆրանսիական դրոշի տակ կռվում էին Իտալիայում և Դանիայում ու Նապոլեոնի «աշխարհակալության գաղափարներուն կատարման համար իրենց արյունը կը թափեին», ֆրանսիական 100 հազարանոց զորքը Ժ. Մյուրատի հրամանատարությամբ խորացավ Իսպանիայի արևելյան և արևմտյան կողմերում: Ֆրանսիացիներն իսպանական արքունիքում եղած «երկպառակությունն ու ժողովրդյան իր թագավորին դեմ ունեցած ատելությունն իրենց օգտին գործածելով երկրին տիրած էին»: Դրա արդյունքում Կարլ IV ոչ միայն հրաժարվեց գահից, այլև «ազատութենե զրկվեցավ, անանկ պարագաներով, որոնք բոլոր աշխարհքիս այլևայլությունը պատճառեցին»[14]:

Ղ. Հովնանյանն այնուհետև ճշմարտացիորեն նկատում է, որ Նապոլեոնին իր «դիտավորությունը գլուխ հանելու» հարցում շատ օգնեց իսպանական արքունիքում «եղած երկպառակությունը»: Դրա պատճառը նա համարում է կառավարության առաջին նախարար Մ. Գոդոյի վարած անխոհեմ քաղաքականությունը: Վերջինս «ոչ թե իր արժանավորությամբը», այլ թագուհու հովանավորությունից և թագավորի տկարությունից օգտվելով, «կառավարության սանձերը ձեռքն անցուցած էր և իբր թե խնամապետ եղած էր, իր շահերուն համար Նաբոլեոնին կողմը կբռներ»: Այս պատճառով Մ. Գոդոյի և թագաժառանգ Ֆերդինանդի միջև «ատելություն»

[13] *Նույն տեղում, էջ 254–255:*
[14] *Նույն տեղում, էջ 256:*

էր ծագել: Ժողովուրդը Մ. Գոդոյին «մեծապես կատեր» ՝ մտածելով, թե նա երիտասարդ արքայորդուն «հայրենի գահեն զրկել կուզե»: Մ. Գոդոյը ցանկանում էր Ֆերդինանդին ամուսնացնել իր ազգականուհու հետ, մինչդեռ թագաժառանգի բարեկամները նրան խորհուրդ էին տալիս Նապոլեոնից խնդրել նրա ազգական իշխանուհիներից մեկի ձեռքը: Ֆերդինանդը 1807 թ. հոկտեմբերի 11-ին այդպիսի խնդրանքով դիմեց Նապոլեոնին, բայց պատասխան չստացավ: Տեղեկանալով Մ. Գոդոյի մտադրությանը ՝ Նապոլեոնը «խիստ վախեցավ» և որոշեց խափանել նրա մտահղացումը: Նա Կարլ IV հայտնեց, որ Ֆերդինանդը «իր թագին և նույն իսկ կենացը դեմ դավաճանություն կնյութե»: Դրա համար Կարլ IV հրապարակավ ազգի առաջ 1807 թ. հոկտեմբերի 30-ին «իր որդին ամբաստանեց»: Մ. Գոդոյը, «իբր թե միջնորդություն անելով», թագաժառանգին խոստովանագիր ստորագրել տվեց, որում նա «ինք զինքը հանցավոր կը խոստովաներ և թողություն կը խնդրեր»: Նոյեմբերի 5-ին Մ. Գոդոյը նրա խոստովանությունը հրապարակեց, որով թեպետ այս «ողբերգությունը լմնցավ», բայց ժողովուրդը Մ. Գոդոյի և «նույնիսկ թագավորին դեմ դառնությամբ լեցվեցավ»[15]:

Երբ Ժ. Մյուրատի գլխավորած ֆրանսիական զորքերը մոտենում էին Մադրիդին, Մ. Գոդոյի խորհրդով խուճապահար Կարլ IV որոշեց փախչել նախ ՝ Սևիլիա, ապա ՝ Ամերիկա: Դրան դեմ էր արքայազն Ֆերդինանդը ՝ «վագրի սրտով և ավանակի գլխով» թագաժառանգը, ինչպես նրան անվանում էր մայրը[16]: Իսկ երբ իսպանացիներին հայտնի դարձավ թագավորական ընտանիքի մտադրությունը, և պարզվեց, որ դրա «դրդիչը» Մ. Գոդոյն է, 1808 թ. մարտի 18-ին Մադրիդում ոտքի ելած ժողովուրդը հարձակվեց Արանխուեսի պալատի վրա, թալանեց այն և Մ. Գոդոյի հետ հաշվեհարդար կտեսներ, եթե Ֆերդինանդը նրան չփրկեր: «Ժողովրդյան կատաղություն իջեցնելու համար» Կարլ IV հաջորդ օրը «ի նպաստ» իր որդի Ֆերդինանդի հրաժարվեց գահից, որը մարտի 24-ին «հանդիսությամբ մայրաքաղաքը մտավ»:

Ղ. Հովնանյանը բավական ճիշտ ու անաչառ է ներկայացնում Մադրիդում տեղի ունեցած իրադարձությունները[17]: Թագաժառանգ Ֆերդինանդը ժողովրդական ըմբոստությունը հմտորեն օգտագործեց իր նպատակների համար և ձերբակալեց չափից ավելի ազդեցիկ «խաղաղության իշխանին»: Իրեն արդեն թագավոր համարող Ֆերդինանդը, պահն օգտագործելով, նամակ գրեց Բոնապարտին ՝ խնդրելով ճանաչել իրեն որպես թագավոր: Նա միաժամանակ հայտնում էր Մ. Գոդոյի դեմ դատավարություն սկսելու մտադրության մասին: Նապոլեոնը երիտասարդ թագավորին չափազանց հաշվենկատ, նուրբ դիվանագիտական ոճով խուսափողական պատասխան գրեց: Նա խորհուրդ էր տալիս Մ. Գոդոյի դեմ դատավարություն չսկսել: «Ձերդ թագավորական մեծությունն այլ իրավունքներ չունի,– գրում էր

---

[15] *Նույն տեղում, էջ 257:*

[16] *Տե՛ս* Ա. Կ ա ս տ ե լ ո. *Նշվ. աշխ., էջ 170:*

[17] *Տե՛ս* Դ ե դ ո վ ի ս դ յ ո Դ ե ս ե ր. Испания и Португалия. 1800–1814.– В. кн: История XIX века. т. 1. Под ред. Лависа и Рамбо. М., 1938, с. 203–205; Ա. Կ ա ս տ ե լ ո. *Նշվ. աշխ., էջ 171–173:*

Նապոլեոնը,– քան մորից եկող իրավունքները: Եթե դատավարությունը նրան պատվազրկի, դրանով իսկ Չերդ մեծությունը կոչնչացնի իր սեփական իրավունքները»[18]:

Ֆրանսիացի հրապարակախոս, քաղաքական գործիչ և փիլիսոփա Ժոզեֆ դե Մեստրը (1763–1821), տեղեկանալով Նապոլեոնի նամակի բովանդակությանը, նկատել է. «Չեմ կարծում, որ Լուի XIV կկարողանար ավելի լավ գրել… Թագուհուն վերաբերող մասը գրված է …. սատանայի մագիլներով»[19]:

Մադրիդում ծավալված իրադարձությունները հավաստի ներկայացնող Ղ. Հովնանյանի բնութագրմամբ՝ իսպանացիների «ուրախությունը տրտմությամբ խառն էր», քանի որ նախորդ օրը Մյուրատն իր բանակով Մադրիդ էր մտել:

Երիտասարդ թագավորը մտածում էր, որ Նապոլեոնը «իր խոնարհական աղաչանաց զիջանելով», կճանաչի իր գահակալությունը և ազգականուհիներից մեկին իրեն կնության կտա, բայց կայսրն արդեն իր անելիքը որոշել էր և գահից հրաժարված թագավորի ու նրա որդու հարաբերությունները լարեց:

Ապրիլի 15-ին Նապոլեոնն իր բանակով եկավ Բայոնն և Ֆերդինանդ թագավորի խնդրանքին անորոշ պատասխան տվեց: Նոր թագավորը, Մյուրատի և մյուսների «խրատին համեմատ», 1808 թ. ապրիլի 20-ին գնաց Նապոլեոնի մոտ, ով նրան Բայոննում «պատվով ընդունելեն ետն» հայտնեց, որ մտադիր է Բուրբոններին Իսպանիայի գահից հեռացնել: Նա Ֆերդինանդին առաջարկեց կամովին ստանձնել Էտրուրիայի թագավորությունը, այլապես նրա «դիմադրությունը շատ գեշ հետևանք կունենա»:

Ֆերդինանդն այս առաջարկությունը մերժեց: Այնժամ Նապոլեոնը Կարլ IV և թագավորական ողջ ընտանիքին Բայոնն հրավիրեց ու մայիսի 5-ին նրա հետ պայմանագիր ստորագրեց: Դրանով Կարլ IV հրաժարվում էր գահից, որի դիմաց ստանում էր Կոմպիենի պալատն ու տարեկան երեք միլիոն թոշակ: Մայիսի 6-ին Ֆերդինանդը թագը վերադարձրեց հորը, բայց մայիսի 10-ին թե՛ ինքը և թե՛ իր եղբայրները նույնպես հրաժարվեցին Իսպանիայի գահից: Դրանից հետո Նապոլեոնը գահից հրաժարված թագավորին ընտանիքի հետ ուղարկեց Կոմպիենի պալատը, իսկ Ֆերդինանդին և եղբայրներին՝ Վալանս, որտեղ Շ. Թալեյրանի «վերակացության տակ իբրև բանտարկյալ կը պահվեին»: 1808 թ. հունիսի 6-ին Նապոլեոնը Իսպանիայի թագավոր հայտարարեց իր եղբայր Ժոզեֆին, ով Նեապոլի թագավորն էր: Նրա փոխարեն էլ 1808 թ. հուլիսի 15-ին Նեապոլի թագավոր հռչակեց Բերգի մեծ դուքս Մյուրատին[20]:

---

[18] *Ա. Մ ա ն ֆ ր ե դ. նշվ. աշխ., էջ 591:*

[19] *Տե՛ս* А. С о р е л ь. Европа и французская революция, т. VII. Пер. с фр. М., 1969, с. 218.

[20] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 258–259:*

Ճշմարիտ ներկայացնելով Իսպանիայի թագավորի գահազրկման մանրամասնությունները[21] ՝ Ղ. Հովնանյանն այնուհետև գրում է, որ Բոնապարտը ֆրանսիական սահմանադրության նման մի սահմանադրություն շնորհեց իսպանացիներին, որը նրանց «մեծամեծաց ժողովը» 1808 թ. հուլիսի 7-ին հավանության արժանացրեց: Դրանից հետո այդ «ժողովը լուծվեցավ», իսկ նոր թագավորը ճանապարհվեց Մադրիդ ՝ «հափշտակված գահին ելլելու համար»: Նրա համոզմամբ, իսպանական «թագին հափշտակությունը» թեպետ Նապոլեոնի «տերության սահմաններն ընդարձակելով, տիեզերական իշխանության հասնելու նոր քայլ» կատարեց, բայց կյանքը ցույց տվեց, որ իրականում նա «քաղաքական սխալմունք» է թույլ տվել: Դա անգլիացիների համար «պատերազմի դաշտ մը բացավ», նրանց պարզ դարձավ, որ եթե Բոնապարտն Իսպանիայում չհասնի իր նպատակին, ապա «իր կործանումն ապահով» է, ուստի ամեն կերպ ջանացին ֆրանսիացիներին դուրս մղել այնտեղից: «Իրոք ալ,– եզրակացնում է Ղ. Հովնանյանը,– Պիրենեան թերակղզվույն վրա թափված արյունեն ելլող շոգին Նաբոլեոնին հաջողության աստղը մթընցուց»[22]:

Ա. Գալֆայանը գրում է, որ Նապոլեոնն իր տերությանը միացրեց նաև Հռոմի պապի տիրույթի չորս գավառները ՝ պատճառաբանելով, թե Ֆրանսիային վերադարձնում է Կառլոս Մեծի նվաճումների մի մասը: Դրանով Նապոլեոնը «սկսավ նվաճած ազգերուն ատելի ըլլալ»: Ա. Գալֆայանը ճիշտ է ներկայացնում Նապոլեոնի դեմ եվրոպական ժողովուրդների ընդվզման պատճառը: Նա գրում է. «Նափոլեոն այսպիսի մեծամեծ աշխարհակալություններ ընելեն» իր դեմ տրամադրեց նվաճված ժողովուրդներին: Նախ ՝ իսպանացիներն «ապստամբեցին» Նապոլեոնի եղբայր Ժոզեֆի դեմ, ապա անգլիացիները տիրեցին Պորտուգալիային[23]:

Գ. Գովրիկյանը հակիրճ պատմում է, որ անգլիական մի գունդ Պորտուգալիան «աշխարհակալեց», իսկ Ժոզեֆը «ստիպվեցավ Մատրիտ թողուլ»[24]:

Ղ. Հովնանյանը, անդրադառնալով իսպանական ժողովրդի ազատագրական պայքարի բռնկմանը, դրա հիմնական պատճառը համարում է Ֆրանսիայի հետ կնքված դաշինքից իսպանացիների «խիստ դժգոհ» լինելը, որը նրանց միայն վնաս էր բերում: Այդ դժգոհությունն այնքան խորն էր, որ մինչ Ժոզեֆ թագավորի Մադրիդ ժամանելը իսպանացիները Նապոլեոնի «դեմ ոտք ելած էին»[25]: Նրա պատմելով ՝ մայիսի 2-ին Մադրիդի ժողովուրդն ազնվականների ու եկեղեցականների առաջնորդությամբ «հեղափոխություն մը հանելով» և Մյուրատի 1200 ֆրանսիացի զինվորների սպանելով ՝ ցույց տվեց, որ «իսպանական ազգը ՝ իր տկար թագավորին պես դյուրավ ՝ իր ուսն օտար լծի տակ պիտի չխոնարհեցնե»: Մայրաքաղաքի

---

[21] *Տե՛ս* История Франции, т. 2. Отв. ред. А. Манфред. М., 1973, с. 136; Е. В. Тарле. Наполеон. М., 1957, с. 220; История XIX века, т. 1, с. 160–161, 205–206; *Ստենդալ. Նապոլեոն, Երևան, 1985, էջ 73–79:*

[22] *Ղ. Հովնանյան. նշվ. աշխ., էջ 257–260:*

[23] *Ա. Գալֆայան. նշվ. աշխ., էջ 143, 146:*

[24] *Գ. Գովրիկյան. նշվ. աշխ., էջ 263:*

[25] *Ղ. Հովնանյան. նշվ. աշխ., էջ 261:*

«օրինակին հետևելով՝ հեղափոխությունը» գրեթե ամբողջ Իսպանիայով մեկ տարածվեց և նախ՝ Սևիլիայում, ապա մյուս գավառներում ստեղծվեցին «մասնաժողովներ»: Համայն Եվրոպան «զարմացմամբ տեսավ այս ժողովրդյան մը պատերազմին անսովոր տեսիլը, որն որ Սպանիայեն Բորդուկալ ալ տարածեցավ և որուն մեջ Նաբոլեոնին՝ հաղթության վարժած զորքերը չէին կրնար հաղթող ելլել»[26]:

Իսպանիայում սկսված իրադարձությունները Ղ. Հովնանյանը թեպետ անվանում է հեղափոխություն, բայց իրականում «հեղափոխություն հանել» ասելով հասկանում էր ժողովրդի «ոտք ելլել», ընդվզում և պայքար իշխանությունների դեմ: Դրա վկայությունը ոչ միայն հետագա իրադարձությունների նրա մեկնաբանություններն ու գնահատականներն են, այլև այդ մասին պատմող գրքի ենթավերնագիրը՝ «Պիրենեան թերակղզվոյն իրողություններն ու պատերազմները»[27]: Ավելին, ճիշտ ընկալելով իսպանացիների պայքարի էությունը՝ նա այն անվանում է «ժողովրդյան պատերազմ»:

«Մասնաժողով» ասելով՝ Ղ. Հովնանյանը նկատի ունի գավառային խունտաները[28], որոնք ապստամբներն ստեղծեցին Աստուրիայում, Խիխոնում, Գալիսիայում, Սևիլիայում և այլ գավառներում: Ամենուրեք խունտաները պատերազմ հայտարարեցին Բոնապարտին, կազմեցին զինված ջոկատներ և աշխարհազորային գործողություններ ծավալեցին ֆրանսիական զորքերի դեմ Սևիլիայում, Գրանադայում, Սարագոսայում, Վալենսիայում[29]: Անաչառ գնահատական տալով իսպանացիների սկսած հերոսական պայքարին՝ նա փաստում է, որ նրանք «ավելի ևս զորացան և կամ գեթ բարոյական քաջալերությունին մեծցավ», երբ հունիսի 24-ին դաշնակցեցին Պորտուգալիայի հետ: Այդ դաշինքը նա համարում է իսպանացիների համար «մեծ օգնություն», որովհետև անգլիացիները, ովքեր Իսպանիայի հետ ունեցած պատերազմը համարել էին ավարտված, օգնական զորք ուղարկեցին Պորտուգալիա:

Շուտով իսապանացիներն այնքան հզորացան, որ օգոստոսի 1-ին Ժոզեֆին հարկադրեցին լքել Մադրիդը: Այս հակամարտությունում իսպանական նախկին կառավարությունից դժգոհողները, որոնք «ազգի խիստ փոքր մասն էին», ֆրանսիացիների կողմնակիցներն էին, իսկ իսպանական ժողովրդի «մեծագույն մասը ոտք ելլողներուն կողմն էր»: Նրանք 1808 թ. սեպտեմբերի 25-ին Արանխուեսում կենտրոնական խունտա ստեղծեցին, որը գործում էր Ֆերդինանդ VII անունից: Բայց նրանց «դատը որչափ որ ալ արդար էր նե,– շարունակում է Ղ. Հովնանյանը,– ի վերա այսր ամենայնի ամեն հեղափոխականաց սովորական պակասութենեն ազատ չէին»: Գավառային խունտաները չէին ցանկանում ենթարկվել կենտրոնական խունտային և նրան իրենց հետ հավասար էին ճանաչում: Եվ դա դեռ

---

[26] *Նույն տեղում:*

[27] *Նույն տեղում, էջ 253:*

[28] *Խունտա (իսպաներեն՝ junta). տարբեր բնույթի միավորումների, միությունների, պետական մարմինների հանձնաժողովների իսպաներեն անվանումը:*

[29] *Ա. Մ ա ն ֆ ր ե դ. նշվ. աշխ., էջ 605,* Испания и Португалия. Под ред. П. И. Лебедева-Полянского и др. М., 1947, с. 103; А. К а с т е л о. *Նշվ. աշխ., էջ 185:*

«բավական չէր, այլև այլ գավառաց իրարու դեմ հնացյալ ատելությունն իսկ չէր մարած»: Այս պայմաններում, եզրակացնում է Ղ. Հովնանյանը, «անտարակույս Նաբոլեոն զիրենք դյուրավ կը հաղթեր», եթե այդ նույն ժամանակ տարբեր տեղերում պատերազմներ չսկսվեին, և անգլիացիները իսպանացիներին օգնության չհասնեին: Նրա կարծիքով՝ ստեղծված իրավիճակն իսպանացիների օգտին էր, որովհետև Պիրենեյան թերակղզում տիրող «անիշխանությունը՝ մեկ կողմանե Սպանիացվոց ավելի օգտակար եղավ, քան թե վնասակար, որովհետև ամեն մեկ գավառ, մանավանդ թե ամեն մեկ քաղաք ինքնագլուխ ըլլալով, թշնամիք կը ստիպվեին յուրաքանչյուրն առանձին առնուլ և մեկին իյնալը՝ մեկալներուն վերա մեծ ազդեցություն չէր ըներ, որով և պատերազմին վերջը չէր գար»[30]:

Անդրադառնալով իսպանացիների մարտավարությանը՝ Ղ. Հովնանյանը նկատում է, որ նրանք չէին ցանկանում բաց դաշտում ճակատամարտ տալ, ուստի «ասդին անդին մասնական կռիվներ կ'ըլլային»: Նա նկատի ունի իսպանական ժողովրդի մղած աշխարհազորային պայքարը, որը հայտնի է գերիլիա[31] անունով: Համաժողովրդական զանգվածային այս շարժումն սկզբնական փուլում մղում էին Աստուրիան, Գալիսիան և այլ գավառներ: Նրա մասնակիցները հիմնականում զինված գյուղացիներ էին, որոնք իրենց մանր հարձակումներով կաթվածահար էին անում կանոնավոր կռիվների վարժված ֆրանսիական բանակին[32]:

Այս պայմաններում Նապոլեոնն իր մարտական լավագույն գեներալներից մեկին՝ Պիեր Դյուպոն դե Լետանին (1764–1840), ով համարվում էր մարշալական մականի առաջին և ամենաարժանի հավակնորդներից մեկը, հրամայեց շարժվել հարավ՝ դեպի Սևիլիա: Միաժամանակ գեներալ Մոնսեի կորպուսը շարժվեց Վալենսիայի կողմը, իսկ մարշալ Ժան Բեսիերին (1768–1830) հանձնարարվեց Ժոզեֆի համար ճանապարհ բացել դեպի Մադրիդ[33]:

Ղ. Հովնանյանը, չանդրադառնալով գերիլիայի «զանազան մանր կռիվներին», պատմում է «ամենեն հռչակավոր ու մեծ հետևություն ունեցող դիպվածների» մասին: Դրանցից նա առանձնացնում է «առաջին կարգավորյալ» ճակատամարտը 1808 թ. հուլիսի 14-ին՝ Մեդինե-դել-Ռիոսեկկոյի մոտ: Այստեղ մարշալ Ժ. Բեսիերը իսպանական 30 հազարի չափ «անկիրթ զորաց դեմ նշանավոր հաղթություն մ'ըրավ»: Թվում էր, թե իսպանացիների կրած ծանր պարտությունը Նապոլեոնի «զինվորական պարծանքն ավելացընելուն պիտի ծառայեր», մանավանդ որ այդ հաղթանակից մեկ շաբաթ անց՝ հուլիսի 20-ին, Ժոզեֆը հանդիսավորությամբ մտավ Մադրիդ և իրեն հռչակեց Խոսե I թագավոր: Նրան ոչ միայն իսպանական գրանդները ճոռում խոսքերով շնորհավորեցին, այլև իսպանացիների անունից երդում տվեց Ֆերդինանդը[34]:

---

[30] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 261–262:*

[31] *Գերիլիա (իսպաներեն guerrilla, guerra). պատերազմ:*

[32] Е. В. Т а р л е. Наполеон, с. 230; Испания и Португалия, с. 104.

[33] *Ա. Մ ա ն ֆ ր է դ. նշվ. աշխ., էջ 605,* А. К а с т е л о. *Նշվ. աշխ., էջ 185:*

[34] *Ա. Մ ա ն ֆ ր է դ. նշվ. աշխ., էջ 606,* А. К а с т е л о. *Նշվ. աշխ., էջ 184:*

Իսպանիայի նվաճումը Նապոլեոնը համարում էր ավարտված, «բայց անանկ չեղավ», գրում է Ղ. Հովնանյանը: Ռիոսեկկոյի հաղթանակի լուրն «աղեկ չտարածված, Սպանահցվոց մեկ մեծ հաղթությամբը՝ իրենց առաջին պարտության ազդեցությունը ջնջվեցավ»: Այդպիսի «մեծ հաղթություն» նա համարում է Անդալուսիայում՝ Բայլենի մոտ 1808 թ. հուլիսի 17–19-ը իսպանական 30 հազար բանակի հրամանատար Խավիեր Կաստանյոսի (1758–1852) տարած փայլուն հաղթանակը ֆրանսիական գեներալ Պիեր Դյուպոնի նկատմամբ, որի 18 հազարանոց դիվիզիան անհաջող և անվճռական մանևրներից հետո, առանց դիմադրության բոլոր հնարավորությունները սպառելու, բաց դաշտում անձնատուր եղավ: Բայլենի պարտության լուրը ստանալու հաջորդ օրը Ժոզեֆ-Խոսե I լքեց Մադրիդը:

Բայլենն ապացուցեց, որ Նապոլեոնի բանակը դադարել է անհաղթ լինելուց: Այն բազմապատկեց իսպանական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ուժերը: Եթե մինչ այդ Նապոլեոնը պատերազմ էր վարում բացառապես կանոնավոր բանակների դեմ, ապա Իսպանիայում հարկադրված էր պատերազմ վարել ընդդեմ ժողովրդի:

Ղ. Հովնանյանի հավաստի պատմելով՝ Ժոզեֆ-Խոսե I Մադրիդը լքելուն պես ֆրանսիացիները հարկադրված եղան օգոստոսի 15-ին դադարեցնել Սարագոսայի պաշարումը[35], որը Բալաֆոքսը «դյուցազնաբար կպաշտպաներ»:

Գ. Գովրիկյանը նույնպես հավաստում է իսպանացիների համառ դիմադրություն ցույց տալը՝ փաստելով «Սարակոսա դյուցազնական պաշտպանութենե մ'ետն ինկավ»[36]:

Ղ. Հովնանյանը ճիշտ է նկատում, որ իսպանացիների «այս հաջողությանց վրա» ավելացավ մարքիզ Պեդրո Լա Ռոմանայի (1761–1811) գլխավորած զորքի վերադարձը Դանիայից հայրենիք, որի լուրը ոգևորեց նաև պորտուգալացիներին: Իրոք, գեներալ Պ. Դյուպոնի անձնատուր լինելուց երկու շաբաթ անց ամբողջ Պորտուգալիայում ապստամբություն բռնկվեց: Օգոստոսի 6-ին Պորտուգալիայում ափ իջան անգլիական զորքերը՝ գեներալ Արթուր Ուելսլիի՝ ապագա դուքս Վելլինգտոնի (1769–1852) գլխավորությամբ: Ժյունոն իր փոքրաթիվ ու կիսաքայքայված բանակով անկարող եղավ դիմադրություն ցույց տալ և օգոստոսի 21-ին Վիմիերայի ճակատամարտում պարտություն կրեց: Նա օգոստոսի 30-ին Սինտրայում անձնատվության ակտ ստորագրեց:

Ղ. Հովնանյանը Ժյունոյի պարտությունը համեմատում է Պ. Դյուպոնի «գլուխն եկած դժբախտության» հետ, ով «հազիվ կրցեր է ազատիլ՝ պատվավոր կերպով անձնատուր ըլլալով»: Ժյունոն իր զորքով հետ քաշվեց, որից ոգևորված իսպանացիները կարծեցին, թե Պիրենեյան թերակղզում ֆրանսիացիները տանուլ են տվել, և «իրենց անկախություն ապահովցած է»[37]:

---

[35] *Խոսքը Սարագոսայի առաջին պաշտպանության մասին է, որը տեղի ունեցավ 1808 թ. հունիս–օգոստոսին:*

[36] *Գ. Գ ո վ ր ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 263:*

[37] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 263:*

Ղ. Հովնանյանը ճշմարիտ է ներկայացնում իսպանացիների տարած հաղթանակները, Ժյունոյի անձնատուր լինելու համաձայնագիր ստորագրելը և ազգային-ազատագրական պայքարը Պորտուգալիայում ծավալվելը[38]: Նա ճիշտ է նկատում, որ իր «հաղթություններու վրա վստահացած՝ ինք զինքն անհաղթ կարծած» և իր «քաջ բանակներովը» շատ թագավորների գահընկեց արած ու «ազգերն իրեն հնազանդեցուցած» Նապոլեոն Բոնապարտը չհաշտվեց Պիրենեյան թերակղզում «անհաղթության պարծանքին» հետ: Իսկապես, Ժյունոյի անձնատվության լուրից կատաղած՝ Նապոլեոնը բացականչեց. «Ինչպիսի խայտառակություն: Ես չեմ ճանաչում այն մարդուն, ով իմ դպրոցում է անցել զինվորական ուսուցումը»[39]:

Օգոստոսի 16-ին Ժոզեֆին հղած նամակում Նապոլեոնը գրում էր. «Այն ամենը, ինչ տեղի է ունենում Իսպանիայում, չափազանց ողբալի է: Կարելի է կարծել, թե բանակի հրամանատարները ոչ թե գեներալներ են, այլ փոստի աստիճանավորներ»: Իսպանացիների հաջողություններից ահաբեկված Ժոզեֆը մտադիր էր նույնիսկ գահից հրաժարվել: Նա տրտնջում էր, որ Իսպանիայում ոչ մի կողմնակից չունի և շրջապատված է սրիկաներով: Նապոլեոնին նա գրում էր. «Ձեր փառքը մարեց Իսպանիայում: Եվ իմ գերեզմանը կդառնա Ձեր անզորության խորհրդանիշը»[40]:

Ղ. Հովնանյանն իրատեսորեն վերլուծում է այդ պահին Նապոլեոնի վարած արտաքին քաղաքականությունը: Նա իրավացիորեն[41] նկատում է, որ մինչ Իսպանիայի վրա անձամբ արշավելը Նապոլեոնը ցանկանում էր «Ռուսիայի հետ ավելի ևս անձկությամբ կապվիլ»: Այդ նպատակով նա 1808 թ. սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 14-ը Էրֆուրտ հրավիրեց ռուսաց կայսր Ալեքսանդր I (1801–1825), Բավարիայի, Վյուրտեմբերգի, Սաքսոնիայի և Վեստֆալիայի թագավորներին, Ավստրիայի և Պրուսիայի դեսպաններին և գերմանական 34 մանր իշխանությունների կառավարողների: Էրֆուրտի «շքեղ ու հանդիսավոր» հանդիպումը Միհիթարյան միաբանն անվանում է «արքայաժողով», որտեղ երկու կայսրերը «իրարու փոփոխ զիջողություններ ընելով» պայմանավորվածություն ձեռք բերեցին իրենց հետագա գործողությունների մասին: Դրանից հետո միայն Նապոլեոնը, Ռուսաստանի կողմից իրեն ապահով զգալով, մոտավորապես 200 հազարանոց զորք հավաքելով՝ անձամբ արշավեց Իսպանիա: Ըստ Ղ. Հովնանյանի՝ «Նաբոլեոն իր բոլոր զորությունը Սպանիա թափած էր, իսկ ամենևին զինվորական կրթություն, կարգավորություն ու պատերազմի ծրագիր չունեցող» իսպանական զորքը չէր կարող դիմադրել Նապոլեոնի «վարժ ու քաջ բանակներին»[42]: Նա Բուրգոսի, Էսպինոսայի, Դուտելայի և

---

[38] История Франции, т. 2, с. 136; История дипломатии, т. 1. Под ред. В. А. Зорина и др. М., 1959, с. 476; Е. В. Тарле. Сочинения, т. VII, с. 198–199.

[39] *Ա. Մանֆրեդ. նշվ. աշխ., էջ 607,* А. Кастело. *Նշվ. աշխ., էջ 186:*

[40] *Ա. Մանֆրեդ. նշվ. աշխ., էջ 610,* А. Кастело. *Նշվ. աշխ., էջ 186:*

[41] *Տե՛ս* История дипломатии, т. 1, с. 476; Е. В. Тарле. Европейские дипломатические отношения при Наполеоне (1799–1814 гг.).– В кн.: История дипломатии. Сост. А. Лактионов. М., 2009, с. 413–414; А. Кастело. *Նշվ. աշխ., էջ 188, Ա. Մանֆրեդ. նշվ. աշխ., էջ 613–614:*

[42] *Ղ. Հովնանյան. նշվ. աշխ., էջ 265:*

Սամոսներայի մոտ հաղթանակներ տարավ ու դեկտեմբերի 4-ին հաղթանակած մտավ Մադրիդ:

Թեպետ այդ ճանապարհով 1809 թ. հունվարի 23-ին Ժոզեֆը կրկին վերադարձավ Մադրիդ ու բազմեց գահին[43]*, այնուամենայնիվ Նապոլեոնը չափազանց լուրջ դիմադրության հանդիպեց և բոլորովին չկարողացավ ընկճել իսպանացիների դիմադրությունը:*

Ղ. Հովնանյանի շարադրանքի ոճից նկատելի է, որ որոշակի համակրանքով է պատմում իսպանացիների պայքարի մասին, ընդգծում նրանց քաջաբար կռվելն ու տարած «մեծ հաղթությունները»: Հակառակ դրան՝ Նապոլեոնի հաղթանակները սոսկ թվարկում է՝ առանց որևէ վերաբերմունք դրսևորելու կամ մեկնաբանելու: Ավելին, նշում է, որ հաղթանակ տարած Նապոլեոն Բոնապարտը հարկադրված եղավ Մադրիդում մի մասի հետ «քաղցրությամբ վարվելով և ազատական կարգադրություններ ընելով, ըստ մասին ալ սպառնալիքներով մեծամեծները ստիպեց»[44] *Ժոզեֆին իրենց թագավոր ընդունել: Այս ճանապարհով նա Մադրիդում նորից իր իշխանությունը հաստատեց, շատ բերդեր գրավեց, անգամ Սարագոսայի երկրորդ հերոսական պաշտպանությունը (1808 թ. դեկտեմբերի 27–1809 թ. փետրվարի 21) հաղթահարեց: Քաղաքի պաշտպանների վրա գրոհող միմյանց հաջորդած նապոլեոնյան երեք մարշալները զարմացած էին իսպանացիների դիմադրությունից: Սարագոսան գրաված մարշալ Ժան Լաննը (1769–1809) ցնցված էր իսպանացիների հերոսությունից: Քաղաքում կենդանի մարդ չէր մնացել, որոնց վրա նա հաստատեր ֆրանսիացիների իշխանությունը*[45]*:*

Ղ. Հովնանյանը Սարագոսայի դիմադրությունն անվանում է «դյուցազնական պաշտպանություն», որը «խիստ երևելի է», բայց անգամ այդպիսի հերոսական դիմադրությունն ընկճելը «բոլորովին չկրցավ խոնարհեցնել Սպանացիները, որոնք Անգղիայի օգնությամբն ու իրենց քաջությամբը մինչև վերջը իրենց հայրենյաց անկախության համար պատերազմեցան»[46]*:*

Գ. Գովրիկյանը նույնպես Սարագոսայի դիմադրությունը բնութագրում է որպես «դյուցազնական պաշտպանություն», որը թեպետ ընկավ, բայց անհետևանք չմնաց[47]*:*

Արժանին հատուցելով իսպանական ժողովրդի հերոսական պայքարին, ընդգծելով նրանց քաջությունն ու հայրենապաշտպան կռիվը՝ Ղ. Հովնանյանը, միաժամանակ, չկորցնելով անաչառությունը, իրավացիորեն գրում է, որ նրանց հաջողությանը նպաստեց նաև Բոնապարտի 1809 թ. հունվարին Փարիզ վերադառնալը և նույն թվականին Ավստրիայի հետ պատերազմի մեջ մտնելը:

---

[43] История XIX века, т. 1, с. 217; История Франции, т. 2, с. 138; А. К а с т е л л о. *Նշվ. աշխ., էջ 202:*

[44] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 265:*

[45] *Ա. Մ ա ն ֆ ր է դ. նշվ. աշխ., էջ 610,* А. Кастело. *Նշվ. աշխ., էջ 186,* История XIX века, т. 1, с. 219; История Франции, т. 2, с. 138.

[46] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 266:*

[47] *Գ. Գ ո վ ր ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 263:*

Ա. Գալֆայանն այս մասին համառոտ փաստում է. «Նափոլեոն անձամբ Սպանիա գնաց, ամեն տեղի թշնամյացը հաղթեց ու հաղթանակավ Մատրիտ մտավ, բայց շուտով հարկադրեցավ Գերմանիա դառնալու՝ Ավստրիո կայսեր դեմ»[48]:

Մխիթարյան միաբանության անդամներն իրավացիորեն գրում են, որ Իսպանիայում նապոլեոնյան բանակի կրած անհաջողությունները նպաստեցին, որպեսզի Ֆրանսիայի դեմ ազատագրական պայքարի ելնեն եվրոպական մի շարք ժողովուրդներ: Ըստ Ա. Գալֆայանի՝ 1809 թ. գարնանը Ավստրիան իսպանական պատերազմը «հարմար առիթ սեպելով, մեծ բանակով Բավարիա մտավ և Թիրոլի երկիրը ոտք հանեց»: Բայց Նապոլեոնի զորավարներից Լեֆեվրը[49] շուտով «Թիրոլի երկրին տիրեց»[50]: Ազատագրական այս պայքարին համառոտ անդրադարձած Գ. Գովրիկյանը թիրոլցիներին անվանում է «դյուցազնաբար պատերազմող» ժողովուրդ, որոնց առաջնորդ Անդրեաս Հոֆերը 1810 թ. սպանվեց ֆրանսիացիների կողմից[51]: Վենետիկի Մխիթարյաններից Գաբրիել վարդապետ Այվազովսկին (1812–1880) անթաքույց համակրանքով ընդգծում է. «թիրոլցիք ազատության սիրով վառված ոտք ելան» հայրենիքին նվիրված «քաջերեն մեկի»՝ Ա. Հոֆերի գլխավորությամբ: Այս «դյուցազնը» իր ուժով, քաջությամբ, բարությամբ և ազնվությամբ «դյուրավ շահեց իր հայրենակցաց սիրտը և անոնց վստահությունը պարապ չհանեց»՝ մի քանի անգամ հաղթելով բավարացիներին ու ֆրանսիացիներին[52]: Ղ. Հովնանյանի գնահատմամբ՝ թիրոլցիների «դժգոհությունն այնքան սաստկացած էր, որ զենք առին և Սպանացոց նման սկսան զիրենք զսպողներուն դեմ կռվիլ»: Նա նույնպես գովաբանում է Ա. Հոֆերին, որն իր «զորության, քաջության, հայրենասիրության ու կրոնական եռանդյան համար իր հայրենակցաց առջևը մեծ համարում ուներ»: Նրա կարծիքով՝ թիրոլցիները «կատարյալ հաղթություն» կունենային և «իրենց հայրենիքը բոլորովին կազատեին», եթե ավստրո-ֆրանսիական զինադադարն իրենց «անորոշության և անվստահության մեջ ձգելով, ամենայն ինչ տակնուվրա չաներ»[53]:

Իսպանական ազատագրական պայքարին անդրադարձած բոլոր Մխիթարյանները կարևորում են իսպանական ժողովրդին անգլիացիների ցուցաբերած ռազմական օգնությունը: Ղ. Հովնանյանը դա համարում է «մեծապես օգտակար» իսպանական պայքարի համար: Նա պատմում է 1809 թ. հունվարի 14-ին անգլո-իսպանական ռազմական դաշինք կնքելու, ապրիլին Արթուր Ուելսլիի (Վելլինգտոնի) գլխավորությամբ անգլիական զորքերի Իսպանիա մտնելու և իսպանական ողջ ժողովրդի պայքարի ելնելու մասին: Անդրադառնում է նաև պորտուգալական ժողովրդի պայքարին, անգլիական զորքերի հետ նրանց համագործակցությանը և 1809 թ. հունվարի

---

[48] *Ա. Գ ա լ ֆ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 143:*

[49] *Լեֆեվր Ֆրանսուա Ժոզեֆ (1755–1820) – նապոլեոնյան մարշալ, Դանցիգի դուքս (1808):*

[50] *Ա. Գ ա լ ֆ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 143–144:*

[51] *Գ. Գ ո վ ր ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 264:*

[52] *«Բազմավեպ», 1848, 1 հունիսի, թիվ 11, էջ 168–169:*

[53] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 278–279:*

16-ին Գոլուննայի ճակատամարտում անգլիական զորքերի հրամանատար Ջ. Մուրի սպանվելու մասին: Ղ. Հովնանյանը փաստում է այն իրողությունը, որ Ավստրիայի նկատմամբ տարած հաղթանակից հետո Նապոլեոնը «իր բոլոր զորությունը նորեն» Պիրենեյան թերակղզի տեղափոխեց: Նրա կարծիքով՝ իսպանական ողջ ժողովուրդը «բրիտանացվոց հետ միացած ըլլալով» գրեթե «հավասար զորություն ուներ» ֆրանսիացիների հետ և կարող էր հաջողությամբ դիմակայել նրանց: Ապրիլին Արթուր Ուելսլիից զատ իր զորքով Պորտուգալիայից Իսպանիա մտավ նաև պորտուգալացի Պերեսֆորտը և Ալմարազի մոտ միացավ իսպանացի գեներալ Կուեստային, որի զորքի թիվը հասավ 60 հազարի: Ֆրանսիացիներն Իսպանիայում ունեին 160 հազար զորք, որոնց սկզբում գլխավորում էին նապոլեոնյան բանակի ճանաչված մարշալներ Միշել Նեյը, Կլոդ Վիկտորը, Նիկոլա Սուլտը, Պիեր Օժերոն, Լորան Սեն-Միրը: Շուտով միացան նաև Լ. Սուշեն, Ա. Մասենան, Օ. Մարմոնը, Ժ. Մակդոնալդը, Ժ. Ժուրդանը և ուրիշներ:

Մխիթարյանները գրում են, որ ֆրանսիական բանակի ընտրանուն դիմակայող Արթուր Ուելսլին 1809 թ. հուլիսի 27–28-ին Դելավերայի մոտ ճակատամարտ տվեց: Գ. Գովրիկյանը նկատում է, որ Դելավերայից հետո ողջ Իսպանիայով մեկ գերիլիայի շարժում ծավալվեց: Ըստ Ղ. Հովնանյանի՝ այս «սաստիկ կռվում» ֆրանսիացիները թեպետ տասը հազար կորուստ ունեցան, բայց Ա. Ուելսլին այդ «հաղթությունեն օգուտ չկրցավ քաղել»: Դրա պատճառը համարում է իսպանական զորքերի «անկիրթ» լինելը և նրանց հարամանատարների «ներքին միաբանության պակասությունը»[54]: Նա մասամբ դրանով է բացատրում 1809 թ. նոյեմբերի 19-ին Օգկանայի և նոյեմբերի 28-ին Սալամանկայի ճակատամարտերում ֆրանսիացիների տարած հաղթանակները: 1810 թ. Նապոլեոնը Իսպանիայում իր զորքի թիվը հասցրեց 300 հազարի, որոնք վերը նշված «անվանի զորապետաց» հրամանատարության տակ «անհնարին մեծ դժվարություններու հաղթելով և դյուցազնական քաջության գործքեր գործելով» գրավեցին մի շարք գավառներ: Ղ. Հովնանյանի գնահատմամբ՝ այդ զինվորականները Ֆրանսիայի ռազմական «համբավը խիստ բարձրացուցին, բայց իրենց այս հաղթությունները՝ կարծես թե իրենց դեմ եղած ատելությունը սաստկացնելու կը ծառայեին»: Իսպանացիների մանր կռիվները գնալով «ավելի կը կարգավորվեին ու կը սաստկանային», իսկ ֆրանսիական «պատերազմի վարժ զորքերը», չնայած ցուցաբերած «դյուցազնական քաջություններու», չէին կարողանում իսպանական տոչորող արևի տակ, անանցանելի լեռներում և անմատույց անդունդների մեջ «երկրին բոլորովին տիրել»[55]:

Մխիթարյանները իսպանացիների պայքարի հաջողությունները իրավացիորեն պայմանավորում են նաև գերիլիայի պայքարով, որը 1809 թ. վերջին թևակոխեց նոր փուլ: Այդ ժամանակ ձևավորված ապստամբական ոչ մեծ ջոկատները հանկարծակի և համարձակ հարձակումներով լուրջ վնասներ պատճառեցին ռազմական արվեստի կանոններով կռվող ֆրանսիացիներին: Գերիլիայի երրորդ փուլում՝ 1811–1812 թթ.,

[54] *Նույն տեղում, էջ 267–268:*
[55] *Նույն տեղում, էջ 268–269:*

ապստամբական ջոկատները շատ նահանգներ ենթարկեցին իրենց հսկողությանը: Իսպանական ազգային շարժումը հզոր բնույթ կրեց և տվեց բազմաթիվ հերոսներ: Նրանցից Ֆրանսիսկո Մինայի (1781–1836) ջոկատը հաջողությամբ կռվում էր երկրի հյուսիսում: «Դիտակ բյուզանդյանը» Ֆ. Մինային անվանում է հայրենիքի «քաջասիրտ պաշտպան» և ափսոսանք հայտնում, որ «այս կտրիճ հայրենասեր զորապետը» թագավորական իշխանության վերականգնումից հետո «չի կրցավ իրեն հայրենասիրության արժանավոր պտուղը վայելել իր հայրենյաց մեջ, ընդունելով իրեն ազգեն շնորհակալություն, սեր ու պատիվ, ինչպես որ արժանի էր», այլ հարկադրված եղավ վտարանդվել օտար երկիր[56]: Սարագոսայի շրջանում գործում էր Խուան Մարտին Դիասը, ով հայտնի էր «Էլ Էմպեսինադո» (համառ) անունով: Հյուսիս-արևմուտքում ֆրանսիացիներին մշտապես վախի մեջ էր պահում Խուլիան Սանչեսը: Կատալոնիայում հերոսաբար կռվում էին գնդապետ Լասի և Գարսիա Նավարրոյի ջոկատները, իսկ Կանտաբրիայի լեռներում՝ աներևակայելի համարձակ Խուան Պորլիերը:

Իսպանական ազատագրական պայքարի մասին զուսպ տոնով պատմող Ա. Գալֆայանը ֆրանսիացիների անհաջողությունները բացատրում է երկրում «անդադարելի զորաժողովներ» անցկացնելով, որի պատճառով «ամեն տեղ տրտունջ կար», ձեռքից բաց թողած հաղթանակներով և իսպանացիների հիրավի համաժողովրդական պայքարով: Նրա բնութագրմամբ՝ «Սպանացիք հայրենյաց ազատությանը համար իրենց քահանաներովն ու կրոնավորներովը ոտք ելած էին» և ամենուրեք ձայնարկում էին՝ «Մահ ֆրանսիացիներին»: Նրանք «ձեռք ձգած գերիները կըսպանեին. ինչուան կանայք ալ պատերազմի մեջ կըմտնեին. ամեն գեղ մեյմեկ միջնաբերդ և ամեն վանք մեյմեկ ամրոց դարձեր էր»[57]: Ա. Գալֆայանը թեպետ գերագնահատում է հոգևորականության դերն ազգային շարժման մեջ, բայց միաժամանակ իրավացիորեն նշում է իսպանական ողջ ժողովրդի պայքարի ելնելն իր ազատության վրա բռնացող ուժի դեմ:

Ղ. Հովնանյանը պատմում է 1810 թ. մայիսին մարշալ Անդրե Մասսենայի (1758–1817) Պորտուգալիա կատարած արշավանքի, մի քանի սահմանաբերդեր գրավելու, սեպտեմբերի 27-ին Պուսակոյի մոտ ճակատամարտ տալու և պարենի պակասության ու զորքում տարածված հիվանդության պատճառով 1811 թ. մարտին հետ վերադառնալու մասին: Մայիսի 3–5-ը նա նոր ճակատամարտ տվեց Ֆուենդե դ'Օնորոյի մոտ, անհաջողություն կրեց և նահանջեց Սալամանկա: Դրանով Պորտուգալիան երրորդ անգամ ֆրանսիացիներից «մաքրվեցավ»: Դրան հակառակ՝ ֆրանսիացիները նոր հաջողությունների հասան Իսպանիայում, «մեծ հաղթություններ ըրին և զանազան ամուր տեղերու տիրեցին»: Հունիսի 28-ին նրանք գրավեցին Դարրակունան, հոկտեմբերի 25-ին Մուրվիետրոյի մոտ հաղթեցին անգլիացիներին, իսկ 1812 թ. հունվարի 9-ին գրավեցին Վալենսիան: Բայց նրանց հաջողությունները երկար չտևեցին, որովհետև Ա. Ուելսլին 1812 թ. կրկին խորացավ Իսպանիայում և միմյանց հետևից գրավեց Սյուիդադ Ռոդրիգոն (հունվարի 16), Պատահոսան (ապրիլի 16) և

---

[56] *«Դիտակ բյուզանդյան», 1815, 1–7 հունվարի, թիվ 1, էջ 7–8:*

[57] *Ա. Գ ա լ ֆ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 147:*

Սալամանկան (հունիսի 28): Դրանից հետո հուլիսի 22-ին նա Լոս Արաբիլեսի մոտ հաղթեց մարշալ Մարմոնին, որով վերացրեց Կադիսի պաշարումը ֆրանսիացիների կողմից: Դրանով Հարավային Իսպանիան ազատագրվեց ֆրանսիացիներից, Ժոզեֆ թագավորը մայրաքաղաքից փախավ, իսկ օգոստոսի 12-ին դուքս Վելլինգտոնը մտավ Մադրիդ[58]:

Մխիթարյան միաբանության գործիչները, պատմելով իսպանական ազատագրական պայքարի մասին, հիմնական ուշադրությունը դարձնում են պատերազմական գործողությունների լուսաբանմանը՝ երկրորդ պլան մղելով երկրի ներսում ընթացած իրադարձությունները: Նրանք շատ քիչ են խոսում մասնավորապես իսպանական կենտրոնական խունտայի, որը կառավարության լիազորություններ էր իրականացնում, և կորտեսների[59] գործունեության մասին: Դրանց հպանցիկ անդրադառնում է միայն Ղ. Հովնանյանը: Ընդգծելով կենտրոնական խունտայում տիրող անմիաբանությանը՝ շեշտում է, որ այն Ֆերդինանդ VII «անվամբը կգործեր»: Նա հավաստի տեղեկություն է տալիս նաև 1810 թ. սեպտեմբերի 24-ին հրավիրված կորտեսի մասին, որը «ինք իրեն վեհապետությունը առած էր»[60]:

Բայց ինչպես Ղ. Հովնանյանը, այնպես էլ Մխիթարյան միաբանության մյուս անդամները, ովքեր միապետական իշխանության կողմնակիցներ էին, գերադասում են լռել կորտեսների 1812 թ. մարտի 19-ին ընդունած սահմանադրության մասին: Այն իր ժամանակի ամենաառաջադիմական սահմանադրությունն էր, որը գերագույն իշխանության կրողը համարում էր ժողովրդին: Օրենսդիր բարձրագույն մարմին էր հռչակվում մեկպալատանի կորտեսը, որն ընտրվում էր երկու տարի ժամանակով՝ 25 տարեկանից բարձր տղամարդկանցից: Թագավորի նշանակած կառավարությունը հաշվետու էր կորտեսներին: Պատգամավորներն անձեռնմխելի էին և չէին կարող երկու անգամ անընդմեջ ընտրվել: Թագավորը պարտավոր էր սահմանադրությանը հավատարիմ մնալու երդում տալ: Այս սահմանադրությունը ոչ միայն Իսպանիայի, այլև եվրոպական շատ երկրների համար XIX դ. ընթացքում բուրժուական հեղափոխության դրոշակակրի դեր էր կատարում[61]:

Հայ հասարակական մտքի պատմության համար չափազանց կարևոր է նաև գաղութահայ առաջին պարբերականների դիրքորոշումը իսպանական ազատագրական պայքարի նկատմամբ, որոնց խմբագիր Մխիթարյանները ժամանակակիցների աչքերով էին լուսաբանում և գնահատում այդ պայքարը:

«Դիտակ բյուզանդյանի» խմբագիր Գրիգոր Գապարաճյանը (1779–?) շաբաթաթերթի 1812 թ. առաջին համարի առաջաբանում պարզաբանում է, որ իր նպատակն է «աշխարհաբար պարզ դյուրին ոճով» շարադրել գերազանցապես «Եվրոպայի մեջ եղած բաները»: Նա հայցում է իր ընթերցողների

---

[58] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 269–270:*

[59] *Կորտես (իսպաներեն cortes–թագավորական արքունիք). միջնադարում դասային ներկայացուցչական ժողով Իսպանիայում և Պորտուգալիայում, նոր ժամանակներում՝ խորհրդարան:*

[60] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 270:*

[61] Испания и Португалия, с. 104.

ներողամտությունը երբեմն սխալ լուրեր տպագրելու համար և խոստանում հաջորդ համարներում դրանք անպայման շտկել: Նա գրում է. «Ու հոս մեկ բան կաղաչենք ու կծանուցանենք հրամանոցներուդ, որ ընտուր աշխարհ ամենը գիտե, խապարը շատ հեղ՝ սուտ չիլլար, ամա սխալ կըլլա, մեր գրած խապարներուն մեջն ալ՝ պազի պազի հեղ պիտի հանդիպի այս բանը, որ ինչպես մենք առանց ակնածելու, գրած սխալնիս հետևյալ թղթերու մեջ պիտի սրբագրենք, այնպես ալ հրամանքնիդ առանց դժվարելումը կարդաք ու մեզի անմեղադիր ըլլաք»[62]:

Հավատարիմ մնալով որդեգրած այս սկզբունքին՝ Գ. Գապարաճյանը եվրոպական մամուլի ու ստացված լուրերի հիման վրա մանրամասնորեն ներկայացնում է Եվրոպայում կատարվող հիշարժան բոլոր իրադարձությունները, նապոլեոնյան պատերազմներն ու իսպանական ժողովրդի ազատագրական պայքարը: Հանդեսի բազում ու բազմաբնույթ լուրերի վերլուծությունից ակներև է դառնում, որ նրա խմբագիրը հասկացել և ընդգծել է իսպանացիների անկախության համար պայքարի կամքն ու վճռականությունը: Գ. Գապարաճյանը նշում է, որ չնայած ֆրանսիական զորքերը «ամեն երևելի տեղանք դրված են», սակայն իսպանացիների ձեռքում են գտնվում ամուր բերդերը, և նրանք միշտ «հոս հոն կզարնեն կզարնվին, կմեռնին կմեռցնեն, բայց որովհետև դիմացնին եղողին ուժը շատ, զորքը անհատնում, իրենք ղենով կելլեն»[63]: Սակայն սա չի խանգարում իսպանացիներին պայքարել գերակշիռ ուժեր ունեցող թշնամու դեմ, որոնք անգլիացիների հետ միասին ֆրանսիական զորքերին «դադար չեն իտար, աստիս անդին կզարնեն» ու մի շարք հաղթանակներ են տարել[64]:

Ղ. Հովնանյանը, պատմելով 1812–1813 թթ. Պորտուգալիայում և Իսպանիայում ընթացած պատերազմական գործողությունների մասին, ընդգծում է, որ երկարատև ու համառ պայքարի արդյունքում ֆրանսիական զորքերը հյուծվեցին, «անթիվ-անհամար» ապստամբներով պաշարված մնացին, իսկ շատերը պարենի պակասության և հիվանդությունների պատճառով «իրենց գերեզմանը կգտնեին»[65]: Նա ճիշտ է նկատում, որ 1813 թ. Նապոլեոնի իշխանությունը Պիրենեյան թերակղզում «բոլորովին ջնջված էր, … միշտ երերուն վիճակի մեջ կրգտնվեր և երբեք կատարյալ չէր հաստատված»: Ղ. Հովնանյանը շատ կարևոր հետևություն է անում իսպանական ազատագրական պայքարի համաժողովրդական բնույթի մասին՝ նշելով, որ այն «ազգային կերպարանք մը կըստանար, և կարգավորյալ գնդերե զատ՝ անկանոն գնդերով ալ մղվելով, գաղղիացվոց խիստ զարհուրելի կըլլար»[66]: «Անկանոն» գնդեր ասելով ակնարկվում է գերիլիայի ջոկատները, որոնց հարձակումները 1813 թ. լրջորեն խոչընդոտում էին պատերազմի կանոններով կռվող ֆրանսիական զորքերի գործողություններին:

---

[62] *«Դիտակ բյուզանդյան», 1812, առաջաբան, էջ 4:*
[63] *«Դիտակ բյուզանդյան», 1812, 15 օգոստոսի, էջ 9:*
[64] *«Դիտակ բյուզանդյան», 1812, 1 հոկտեմբերի, էջ 25, 15 հոկտեմբերի, էջ 31:*
[65] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 270:*
[66] *Նույն տեղում, էջ 333:*

Իրավացիորեն ընդգծելով իսպանական ազատագրական շարժման համազգային բնույթը՝ Ղ. Հովնանյանը միաժամանակ փաստում է, որ դուքս Վելլինգտոնը 1812 թ. հոկտեմբերի 11-ին հարկադրված եղավ դադարեցնել Բուրգոսի պաշարումը և քաշվել Պորտուգալիա: Նոյեմբերի 1-ին Ժոզեֆ թագավորը ֆրանսիական զորքի գլուխ անցած նորից Մադրիդ մտավ ու վերականգնեց իր իշխանությունը: Այդ պահին թեպետ առավելությունն անցավ ֆրանսիացիներին, բայց «պատերազմը չէր կրնար վերջանալ», քանզի նրանք նույնիսկ իրենց գրաված տարածքներում դրության տերը չէին և «անթիվ-անհամար» թշնամիներով էին շրջապատված: Ղ. Հովնանյանը իրավացիորեն նկատում է, որ Պիրենեյան թերակղզում ընթացող ազատագրական պայքարի ընթացքի վրա լրջորեն անդրադարձավ 1813 թ. մարտին Էբրո գետի մոտ Ժոզեֆ թագավորի և մարշալ Ժան Բատիստ Ժուրդանի (1762–1833) գլխավորած բանակի ճանապարհը փակելը: Դրան հետևեց հունիսի 21-ի Վիտտորիոյի «նշանավոր» ճակատամարտը: Այստեղ դուքս Վելլինգտոնի գլխավորած անգլիացիներից, իսպանացիներից և պորտուգալացիներից կազմված բանակը հաղթանակ տարավ Ժոզեֆ թագավորի և Ժուրդանի նկատմամբ: Կորցնելով 15 հազար զինվոր՝ վերջինս փորձեց պաշտպանվել Պամպլոնայում, որը իսպանացիները պաշարեցին: Մարշալ Նիկոլա Սուլտը (1769–1851) երեսուն հազար զորքով նրան օգնության գնաց, բայց հուլիսի 28–29-ին Ռոնսվալի մոտ պարտություն կրեց և քաշվեց դեպի Պիտասսաո: Հուլիսին գեներալ Սուշեն լքեց Վալենսիան: Իսպանացիները օգոստոսի 30-ին տիրեցին Սեբաստիանին, հոկտեմբերի 31-ին՝ Պամպլոնային: Դրանից հետո ֆրանսիացիների հսկողության տակ մնացին միայն Բարսելոնան, Ֆիկուիերասը և Ռոգասը[67]: Ժոզեֆի և Ժուրդանի նահանջից հետո դուքս Վելլինգտոնը հոկտեմբերի 7-ին անցավ ֆրանսիական սահմանը: Բոնապարտը հարկադրված դեկտեմբերի 8-ին Վալանսում Ֆերդինանդ VII հետ հաշտության դաշինք կնքեց:

Գ. Գովրիկյանը փաստում է, որ դուքս Վելլինգտոնը Վիտտորիոյի մոտ հաղթանակ տանելով՝ մտավ Ֆրանսիա[68]: Ա. Գալֆայանի պատմելով՝ Նապոլեոնի «հին զորաց քաջերը ան պատերազմներուն մեջ կորսընցուց», իսկ Ժոզեֆը պարտություն կրեց դուքս Վելլինգտոնից և «փախավ» Ֆրանսիա[69]:

«Դիտակ բյուզանդյանի» 1813–1814 թթ. համարները խմբագրած Մաղաթիա Փյուսկյուլճյանը մանրամասն պատմում է ինչպես եվրոպական մյուս երկրներում, այնպես էլ Իսպանիայում ընթացող ազատագրական պայքարի մասին: Նա կարծիք է հայտնում, որ 1813 թ. Նապոլեոնը «չի կրնար երկու պատերազմ մեկ տեղ քշել, թե որ ուզե նորեն պատերազմ» վարել և ինչպես երևում է, նրան հարկավոր է ներկայումս Ռուսաստանի դեմ պատրաստվել պատերազմի, քան թե Իսպանիայի, «որի դեմ բավական զորություն ունի»: Նրա գնահատմամբ՝ Նապոլեոնն Իսպանիայում պայքարում տեղի կառավարության դեմ, «որուն միջոցները խիստ քիչ են ու ինկլիզի զորավարի դեմ, որ տկար է սրտով: Այս երկու աղքատութենե է,

[67] *Նույն տեղում, էջ 334:*
[68] *Գ. Գ ո վ ր ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 266:*
[69] *Ա. Գ ա լ ֆ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 148:*

որ հաղթական ցրցուց իր զենքը», քանզի Վելլինգտոնը նահանջեց Պորտուգալիա[70]: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ 1812 թ. նոյեմբերին ֆրանսիացիները կրկին մտան Մադրիդ ու միավորեցին իրենց երեք բանակները: 1813 թ. ամռանը ռազմական գործողությունները հաջողություն բերեցին իսպանա-պորտուգալա-անգլիական ուժերին, որոնք մի շարք հաղթանակներ տարան: Պատմելով դրանց մասին՝ «Դիտակ բյուզանդյանը» տպագրում է ֆրանսիական գեներալներից մի քանիսի զեկույցներն ու նամակները, որոնցում նրանք ընդգծում էին իսպանացիների «շատ կտրիճությամբ» պաշտպանվելը, «վերջի աստիճանի կատաղությամբ պատերազմելը», «սաստիկ կատաղությամբ հարձակվելը» և կռվի դաշտում «շատ վարպետ» լինելը[71]: Այս դեպքից հետո փոխվում է «Դիտակ բյուզանդյանի» վերաբերմունքը Վելլինգտոնի նկատմամբ: Հանդեսը մանրամասն տեղեկություններ է տալիս դաշնակցային զորքերի մղած «սաստիկ արյունահեղ» կռիվների, տարած հաղթանակների մասին, իսկ Վելլինգտոնին համարում է «խիստ սրտոտ» գեներալ, որն «առանց վախենալու կմտնար ամեն պատերազմի վտանգավոր տեղերը»[72]:

Մ. Փյուսկյուլճյանը պատմում է նաև Նապոլեոնի ու Ֆերդինանդ VII միջև կնքված դաշնագրության մասին, տպագրում է դրա տեքստը և անդրադառնում դաշինքի արձագանքին: Նա իրավացիորեն գրում է, որ կորտեսները հայտնեցին Նապոլեոնին ու Ֆերդինանդին, թե իսպանացիները չեն կարող ընդունել այդ դաշինքը, քանի դեռ թագավորը չի զբաղեցրել իր օրինական գահը, իսկ ֆրանսիական զորքերը դուրս չեն եկել Իսպանիայից[73]: Կորտեսների այս դիրքորոշումն ընդգծում է նաև Վենետիկի Մխիթարյաններից պատմաբան և բանասեր Ղուկաս Ինճիճյանը (1758–1833), ըստ որի՝ «մեկ ազահության կիրքը Քորտեզին, որ վարի աշխարհ գնաց, բերավ քաջասրտության, չարքաշության, հարատևության կրքեր»[74]:

Մ. Փյուսկյուլճյանն այնուհետև գրում է, որ Իսպանիան բաժանվել է երկու մասի. «հասարակ ժողովուրդը» պաշտպանում է կորտեսներին, որը չի ցանկանում թագավորի իշխանությունը, իսկ ազնվականությունը կողմ է Ֆերդինանդին[75]: Նա հավաստի ներկայացնում է Իսպանիայում ստեղծված քաղաքական իրադրությունը: Կորտեսները պահանջում էին թագավորից հավատարմության երդում տալ 1812 թ. սահմանադրությանը և նոր անցնել գահին: Ֆերդինանդ VII կարողացավ միապետության կողմնակիցների հետ հաղթահարել կորտեսների դիմադրությունը և նստել գահին[76]:

---

[70] *«Դիտակ բյուզանդյան», 1813, 21–31 հունվարի, թիվ 5, էջ 22:*

[71] *«Դիտակ բյուզանդյան», 1813, 7–9 օգոստոսի, թիվ 60, էջ 244, 13–15 օգոստոսի, թիվ 62, էջ 252, 16–31 օգոստոսի, թիվ 63, էջ 258:*

[72] *«Դիտակ բյուզանդյան», 1814, 16–31 հունվարի, թիվ 2, էջ 9–16, 1–15 փետրվարի, թիվ 3, էջ 19:*

[73] *«Դիտակ բյուզանդյան», 1814, 1–15 մարտի, թիվ 5, էջ 25–29:*

[74] *«Եղանակ բյուզանդյան», 1816, էջ 39:*

[75] *«Դիտակ բյուզանդյան», 1814, 1–5 մայիսի, թիվ 10, էջ 61:*

[76] История XIX века, т. 1, с. 233; Испания и Португалия, с. 105.

Այս իրողությունը փաստում է Ղ. Հովնանյանը, ըստ որի՝ «Գորդէզներն իրենցմէ խնդրված հաստատությունը չտվին՝ ըսելով, որ Փերդինանդ նույն դաշինքը գրած ատեն՝ ազատ չէր»[77]:

Նապոլեոնը Ֆերդինանդ VII ազատություն էր տվել, բայց «թեություն» դնելով, որ նա անգլիացիներին դուրս բերի երկրից: Կորտեսները «չուզեցին աս դաշինքն ընդունիլ, և վերջապես որոշեցին զինքն ան ատեն իրենց թագավոր ճանչնալ՝ երբ որ Սպանական հողի վրա կը գտնվի»: Ֆերդինանդ VII կորտեսների 1812 թ. սահմանադրությունը «մերժելեն ետև» 1814 թ. մայիսի 14-ին մտավ Մադրիդ[78]:

Գ. Գովրիկյանը գրում է, որ գահին հաստատվելուն պես Ֆերդինանդ VII «ազգային ժողովույն (Գորդեզներու) 1812 թ. շինած սահմանադրությունը վերցուց և հալածեց անոր պաշտպանները»[79]:

Նապոլեոն Բոնապարտի բանակի պարտությամբ ավարտվեց իսպանական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որը լուրջ խթան հանդիսացավ նապոլեոնյան տիրապետության դեմ մյուս ժողովուրդների ոտքի ելնելուն:

Այդ պայքարին անդրադարձած արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչներն իրենց աշխատություններում ու պարբերականներում ընդգծել են եվրոպական ճնշվող ժողովուրդների ազատատենչությունը, հանուն հայրենիքի ազատության նրանց ոտքի ելնելը: Այս առումով ուշագրավ է Վենետիկի Մխիթարյանների դիտարկումը: Նրանք «Բազմավեպում» գրում են, որ Նապոլեոնի դեմ պատերազմում իսպանացիների պայքարի «կայծը խաբեական էր... ու մոգական»: Նրանց համոզմամբ՝ «ազգաց ազատությունն առաջ է, քան զանկախություն նոցա, եթե նվազի անկախություն՝ փճանա և անկախություն»: Այս հայեցակետից ելնելով՝ Մխիթարյաններն ընդգծում են. «Իսպանացիք կպարծեին թե խորտակեցին Նաբոլեոնյան հսկան, ամենևին չէին մտածեր որ ի գին անկախության գործեցին զայն»[80]:

Մխիթարյանների աշխատությունները և պարբերականները, անկախ դրանցում թույլ տված առանձին վրիպումներից ու որոշ անճշտություններից, արժեքավոր են հայ հասարակական մտքի համար: Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները ոչ միայն ճիշտ են հասկացել իսպանական ժողովրդի պայքարի ազգային-ազատագրական լինելը, այլև իրատեսորեն ներկայացրել են XIX դ. սկզբում Եվրոպայում ստեղծված քաղաքական իրավիճակը:

---

[77] *Ղ. Հ ո վ ն ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 334:*
[78] *Նույն տեղում, էջ 349:*
[79] *Գ. Գ ո վ ր ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 271:*
[80] *«Բազմավեպ», 1875, հ. 33, պր. Ա–Դ, էջ 88:*

МХИТАРИСТЫ О НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ ИСПАНСКОГО НАРОДА ПРОТИВ НАПОЛЕОНОВСКОЙ ФРАНЦИИ

ФЕЛИКС МОВСИСЎЯН

Резюме

Национально-освободительная борьба испанского народа против наполеоновской Франции в 1808–1814 гг. удостоилась внимания армянской общественной мысли. К ней обратились члены Конгрегации мхитаристов Венеции и Вены, представляющие западноармянское национально-консервативное направление. В редактируемых ими первых периодических изданиях армянских колоний – «Тарегрутюн», «Еганак бюзандян», «Дитак бюзандян» – на основе публикаций европейской печати мхитаристы попытались непредвзято рассказать о зарождении борьбы испанского народа, дальнейшем ее течении, герилье и о наиболее примечательных эпизодах патриотической обороны. Историки и филологи Конгрегации мхитаристов Амбросиос архимандрит Галфаян, Григор архимандрит Говрикян, Гевонд архимандрит Овнанян и другие в своих работах расценивали борьбу испанского народа как освободительную и патриотическую, которая ведется во имя независимости родины и сохранения испанской монархии. Мхитаристы подчеркивали угрожающие последствия наполеоновских завоеваний для стабильности, политического равновесия, сохранения мира в Европе, национального суверенитета европейских народов, в их числе и испанцев.

THE MEKHITARISTS ON NATIONAL-LIBERATION STRUGGLE OF THE SPANISH AGAINST THE NAPOLEONIAN FRANCE

FELIX MOVSISYAN

Summary

The national-liberation struggle of the Spanish (1808–1814) against the Napoleonian France caught the attention of the Armenian public thought. The members of the Mekhitarist Congregation of Venice and Vienna who represented West Armenian national-conservative direction touched upon it. Counting on the European press reports in the first periodicals of colonial Armenia ,,Taregrutyun'', ,,Yeghanak Byuzandyan'', ,,Ditak Byuzandyan'' edited by them the Mekhitarists tried to tell impartially about the origin, process, gerilia of the Spanish, as well as the notable episodes of the patriotic defence. In their works historians and philologists of the Mekhitarist Congregation Ambrosios archimandrite Galfayan, Grigor archimandrite Govrikyan, Ghevond archimandrite Hovnanyan and others in their works considered the struggle of the Spanish to be liberational and patriotic which was led for the sake of the independence of their fatherland and the maintenance of the Spanish monarchy. The Mekhitarists emphasized the dangerous consequences of the Napoleonian conquests for the stability, political balance and peace maintenance in Europe, as well as for national independence of European nations, the Spanish, in particular.